ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ապրիլի 2024թ. թիվ 230-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 3 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 129-Ն որոշմամբ, հաշվի առնելով նույն որոշման հիման վրա համակարգչում նախօրոք զետեղված ու համակարգչի կողմից պատահական ընտրված 4 թեկնածուների ցուցակը և ՀՀ առողջապահության նախարարի 26.04.2024թ. թիվ ԱԱ/05/12114-2024 գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ենթակայության՝ հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 30.04.2024թ. ժամը 11:00-ին մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հանձնաժողովի անդամներից հանձնաժողովի նախագահ նշանակել Կամո Աշրաֆյանին, հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Ադամյանին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

29/04/24

X

ԱՐԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

Ա.ՂԱՋԱՐՅԱՆ

2024թ. ապրիլի 29
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2024թ. ապրիլի 29-ի
թիվ 230-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ենթակայության «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի

ԿԱԶՄ

Կամո Աշրաֆյան	- ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Ռուզաննա Պողոսյան	- ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ
Կարինե Ադամյան	- ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ
Մերի Դալլաքյան	- ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ
Նորա Փահլևանյան	- ՀՀ առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության արտահիվանդանոցային բժշկական օգնության քաղաքականության բաժնի պետ
Ռուզան Մարտիրոսյան	- ՀՀ առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանման վարչության մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ
Անժիկ Հովհաննիսյան	- ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Լոռի» մասնաճյուղի տնօրեն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

29/04/2024

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ